ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Լ.Վ.ՍԱՖԱՐՅԱՆ, Ս.Ա.ՓԻՐՈՒԶՅԱՆ

1988թ. Սպիտակի երկրաշարժը Հայաստանում առաջ բերեց երկրաշարժի պատճառներին ու հետևանքներին վերաբերող մի շարք բացատրություններ և կարծիքներ, որոնք պայմանավորված էին այդ ժամանակաշրջանի Հայաստանյան հասարակության քաղաքական և մշակութային կյանքով: Երկրաշարժը տեղի ունեցավ Ղարաբաղյան շարժման ամենաակտիվ փուլում, երբ ինչպես Հայաստանի բնակչությունը, այնպես էլ ողջ հայ ժողովուրդը ապրում էր ազգային ազատագրական զարթոնքի բուռն վերելք: Միաժամանակ, Հայաստանում ձևավորվում էին քաղաքական և սոցիալական կյանքի փոփոխությունների ուղղությունները: Փաստորեն 1988թ. սկզբից ի վեր հայ ժողովրդի հայաստանաբնակ հատվածը ապրում էր կյանքի մի ռիթմով. Ղարաբաղի հայության ազատագրության խնդիրը, Ադրբեջանում հայերի ցեղասպանության առաջ բերած գերզգայականությունը (խոսքը 1988թ. փետրվարի 27 – 29-ին տեղի ունեցած սումգայիթյան դեպքերի մասին է), բոլորի ուշադրության կենտրոնում էին Երևան – Մոսկվա, Երևան – Բաքու, Երևան – Անկարա հարաբերությունները՝ իրենց ողջ բարդություններով: Հայաստանում դեռ չէին ձևավորվել այն քաղաքական հոսանքները, որոնք պիտի տրոհված-տարբերակված մոտեցում ցուցաբերեին ընթացիկ երևույթներին: Կարելի է միայն ասել, որ Հայաստանի պաշտոնական իշխանությունները (կոմունիստները), հիմնականում համամիտ լինելով ժողովրդական շարժման հետ, որոշ վերապահումով էին մոտենում իրենց տրամադրությունները արտահայտելու խնդրին: Ակնհայտ է, որ 1988թ. աշնանը ռուսական զորքերի կողմից Հայաստանում պարետային ժամ մտցնելու հանգամանքը որոշակի նախատրամադրվածություն էր ստեղծել երևույթները մեկնաբանելու հարցում. դա ևս արտացոլվել է Սպիտակի երկրաշարժի պատճառների վերաբերյալ պատկերացումներում:

Ամենօրյա բազմահազարանց ցույցերի օրերին էր, որ Հայաստանում պայթեց հզոր երկրաշարժը: Ընդամենը 40 վայրկյանում ավերվեցին 8 միլիոն քառակուսի մետր բնակտարածություն՝ հանրապետության տարածքի 17%-ը, 21 քաղաք և շրջկենտրոն, 342 գյուղ: 514 հազար մարդ մնաց անօթևան, իսկ մահացածների թիվը միայն պաշտոնական տվյալների համաձայն 25 հազար էր[1]: Հիպոկենտրոնը գտնվում էր Սպիտակից փոքր-ինչ հյուսիս, իսկ վերնակենտրոն գոտին Բազումի լեռնանցքի տարածքում էր: Սպիտակում երկրաշարժի ուժգնությունը հասել է 9 – 10 բալի, Լենինականում 8, կիրովականում 7 – 8 բալի: Շուրջ 10 հազար քառակուսի կիլոմետր տարածքում երկիրը ցնցվել է 6 բալ հզորությամբ: Ընդհանուր դարձված կարծիքն այն էր, որ երկրաշարժի ավերածությունների մի խոշոր մասին պայմանավորված էր կառույցների անորակությամբ: Զարմանալի է, այդ փաստ, որ տարիներ առաջ վթարայնության պատճառով Լենինականի

[1] *Մ. Մանուկյան, Երկրաշարժ, Ե., 1989, էջ 7:*

հին հիվանդանոցից մարդիկ տեղափոխվել էին նորակառույցը, որն առաջին իսկ հարվածից ավերվեց, իսկ վիճարայինը մնաց կանգուն[2]: Այդ օրերին աղետի գոտու հետ առնչություն ունեցողները հետևյալ կերպ էին նկարագրում անորակ շինարարության պատճառով առաջացած ավերածությունները. «Փլատակների տակից մենակ ավազ էր ելնում, ցեմենտի կտոր չկար: Բոլոր շենքերը փլվել էին»: Այս մասին ձևավորվել են նույնիսկ ասացվածքի բնույթ ստացած բանաձևեր. «Շինարարներն իրենց երեխաների համար գերեզմաններ էին սարքել», «Լենինականը քանդվեց, Գյումրին մնաց», «Դպրոցները գերեզմանոց դարձան»: Ընդամենը 40 վայրկյանում Հայաստանի հյուսիսային շրջանները վերածվեցին «աղետի գոտու»: Այդ 40 վայրկյանները ոչ միայն աղետի գոտում, այլև ողջ Հայաստանում առաջ բերին բարոյա-հոգեբանական նոր մթնոլորտ, տնտեսական խիստ ծանր կացություն, նոր մտածելակերպ, աշխարհայացք և աշխարհընկալում, նոր արժեքներ, բառապաշարային նոր շերտ, սոցիալական նոր երևույթներ, ժամանակի նոր պարբերացում, «երկրաշարժ», «ճակատագիր», «Աստված» հասկացություններ-ի նոր ըմբռնում, երկրաշարժից արծարծված սովորութային նորմեր և այլն[3]:

Ուշագրավ է, որ աղետի գոտում դաշտային ազգագրական նյութեր հավաքելիս[4] շարունակ շեշտվում էր այն հանգամանքը, որ երկրաշարժի օրերին մարդկանց զգայական ռեակցիան խիստ բթացել է. անտարբեր էին դարձել վշտին և սարսափազդու տեսարաններին, մահը դարձել էր առօրեական, իսկ վշտի համատարածությունը այդ զգացումը փոխարինել էր անտարբերությամբ: Աղետի գոտու բնակիչները մարդկանց հոգեբանական վիճակը համեմատում էին 1915թ. Արևմտյան Հայաստանում Թուրքիայի կազմակերպած հայկական ջարդերից հայերի «փախեփախի» հետ: Երկրաշարժի հոգեբանական հետևանքն էին մարդկանց նմանեցումը «ամբոխներին խելագարված», մարդկանց «անջատված վիճակը». մեռելները չորի պես թափած էին, վրաներովն անցնում էինք, չէինք վախենում», «այնքան մեռել էինք տեսել, որ սառնացել էինք», իսկ դիակները գտնելիս «մարդիկ իրար աչքալուսանք էին անում»: Երկար ժամանակ շատերի տներում արգելված թեմա էր երկրաշարժը, նրա մասին ընդհանրապես աշխատում էին չխոսել:

1988թ. երկրաշարժը բերեց ժամանակի նոր պարբերացում: Աղետի գոտու բնակիչների համար իրադարձությունները ժամանակային առումով բաժանվում են 2 մասի՝ մինչ երկրաշարժը տեղի ունեցած իրադարձություններ և երկրաշարժից հետո տեղի ունեցած դեպքեր: Երկրաշարժը ժամանակի բաժանման սահմանագիծ՝ «Քրիստոսի երկրորդ գալուստ» է դառնում նաև մարդկանց՝ իրենց կյանքը և կյանքում տեղի ունեցած իրադարձությունները պարբերաշրջանների բաժանելու համար:

Չնայած այն բանին, որ երկրաշարժերը Հայաստանում բավականին շատ են եղել, բայց 1988թ. աղետը շատերի կողմից միանգամից չի ընկալվել և գիտակցվել որպես երկրաշարժ: Նրանք, ովքեր անմիջապես ընկալել են տեղի ունեցողը որպես երկրաշարժ, հիմնականում նախկինում ևս զգացել են երկրաշարժեր («Երբ ցնցումը եղավ, կուրսեցիներս լսարանում իրար անցան՝ էս ի՞նչ էր, էս ի՞նչ էր: Ես էլ, որպես «գործին» ծանոթ մարդ, նստածս տեղից

---

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Աշխատանքը հիմնված է աղետի գոտում և Հայաստանի այլ շրջաններում հավաքված դաշտային ազգագրական նյութի վրա:

ասացի, որ երկրաշարժ էր»: «Մինչ այդ միշտ էլ երկրաշարժեր զգացել եմ, այդ պատճառով գլխի ընկա, որ երկրաշարժ է: Մի անգամ ուսանող ժամանակ տանն էի, երբ երկրաշարժ եղավ. պատը ցնցվեց, վազեցի, որ բռնեմ պատը չփլվի»: «Զգացի ցնցումը, անմիջապես հասկացա, որ երկրաշարժ է, քանի որ մինչ այդ էլի են եղել երկրաշարժեր, գրականությունից էլ եմ ծանոթ այդ երևույթի նկարագրությանը»):

Նրանք, ովքեր մինչ դեկտեմբերյան աղետը երկրաշարժեր չեն տեսել, այդ իրողությունը գիտակցել են ցնցման պահին շրջապատում կատարվող իրադարձություններից կամ այլ աղբյուրներից՝ երկրաշարժի նկարագրության վերաբերյալ ունեցած տեղեկություններից («Լուսամուտից դուրս էի նայում, տեսա, թե ինչպես է հողը շարժվում, ալիքաձև տատանվում էր, հողը նավակի պես տատանվում էր, այդ պահին դիմացի շենքը փլվեց, եզրերը փլվեցին, մնաց միայն մեջտեղի հատվածը: Հասկացա, որ երկրաշարժ է»: «Ցնցման պահին մայրս բղավեց, որ երկրաշարժ է, փախչենք: Մայրս գլխի ընկավ, որ երկրաշարժ է, քանի որ ջահը շարժվում էր»: «Երբ ցնցումը սկսվեց, ես առաջինը ասացի, որ երկրաշարժ է: Ես երբևէ երկրաշարժ չէի տեսել, բայց մեծերը պատմում էին, որ երկրաշարժի ժամանակ պատերը ընում-գալիս են»):

Շատերի մեջ երկրաշարժի ֆիզիկական զգացողությունը առաջ է բերել ցնցման ասոցիացում այլ երևույթների հետ, և միայն որոշ ժամանակ անց իրողությունը գիտակցվել է որպես երկրաշարժ: Ցնցման ֆիզիկական զգացողությունը և նրա ասոցիացումը այլ երևույթների հետ հիմնված են. 1) ցնցման միայն զգայական ընկալման վրա, 2) ցնցման և դրան նախորդած կամ ուղեկցող ձայնային էֆեկտի զգայական ընկալման վրա:

Երևանում, որտեղ ցնցումը համեմատաբար թույլ էր և ցնցմանն ուղեկցող ստորգետնյա ձայնը աննշան էր կամ բացակայում էր, ցնցումը հիմնականում դիտվել է իբրև ծանր բեռնատարների երթևեկության կամ սեփական տկարության արդյունք («Դասարանում էի, դաս էի բացատրում, երբ զգացի, որ հատակը հորիզոնական ճոճվեց, քիչ մնաց ընկնեի, աշակերտները ծիծաղեցին: Առաջին պահին թվաց, թե ԲՏՌ-ներ են անցնում: Հետո երկրորդ ալիքը եղավ, որն ավելի ուժեղ էր: Երեխաները գոռացին՝ երկրաշարժ է, ու փախան դուրս»: «Երբ ցնցումը եղավ, ինձ թվաց, թե գլուխս է պտտվում»: «Ես դրսում էի, հանկարծ մի գոռոց եկավ, գլուխս պտտվեց. ես հիվանդ էի, ինձ թվաց, թե գլուխս ջերմությունից է պտտվում»: «Երկրաշարժի ժամանակ լսարանում տղաներից մեկը ասաց. «Չհասկացանք, համալսարանի կողքով տրամվայի գծեր են քաշե՞լ»):

Աղետի գոտում ցնցմանն ուղեկցող ստորգետնյա և վերգետնյա ձայները տարբեր վայրերում բնակվող մարդկանց կողմից նկարագրվում են գրեթե միևնույն բառերով՝ գոռոց, գոռոց, գոռգոռոց, տրաքոց, պայթյունի ձայն, գոռում-գոչյուն և այլն («Մի գոռոց-գոռոց, ահռելի գոռոց եղավ, ապա կրկնվեց, տրաքոցի ձայնի էր նման: Գետնի տակից կարծես գոռում-գոչյունի ձայն էր գալիս»: «Հանկարծ խշշոցի ձայն եկավ, եռացող ջրի ձայնի էր նման, դեմքիս տաքություն զգացի, գոռոց-գոռգոռոցի ձայն եկավ, ու այլևս ոչինչ չեմ հիշում. մնացել էի փլատակների տակ, ուշաթափվել էի»: «Երբ ցնցումը սկսվեց, հասկացա, որ երկրաշարժ է, այնպես տարավ – բերեց, այնպիսի գոռոց էր, որ հազիվ մի ծառից բռնվեցինք՝ չրնկնելու համար»: «Մինչ երկրաշարժը ահավոր ձայներ, ճռնչոցներ էին գալիս, մեզ թվաց, թե արտադրամասերից են այդ ձայները: Բոլորն էլ լսել են. ստորգետնյա խուլ

աղմուկ էր մինչ երկրաշարժի պահը»: «Հարևաններն ասում էին, որ սկզբում պայթյունի ձայն են լսել, հետո ցնցումները զգացել»):

Ցնցումը և ստորգետնյա ու վերգետնյա ձայներն առաջ են բերել ռմբակոծումների, «Թուրքերի հարձակման» հետ կապված ընկալումներ: Ընդ որում, նման ձևով են նկարագրում երկրաշարժի իրենց ֆիզիկական ընկալումը միայն սպիտակցիներն ու գյումրեցիները: Քաղաքական իրադարձությունները ստեղծել էին հոգեբանական թեժ մթնոլորտ, երբ, ինչպես նշում է մի սպիտակցի, «Թուրքերի խառը վիճակն էր, փախեփախը, ասում էին, թե Թուրքը գնալուց առաջ կարող է գան, վնաս տան մեզ»: Թուրքերի կողմից այս վնասի մասին պատկերացումն այնքան տարածված է եղել, որ անգամ երկրաշարժն ինքնին ընկալվել է որպես «Թուրքերի ձեռքի գործ», «Թուրքերի տված վնաս», իսկ շրջապատում եղած փլատակները՝ «Թուրքերի արած ռմբակոծություն» («Միայն զգացել եմ ցնցումը, ինձ թվաց, թե Թուրքերը բան պայթեցրին: Ձայն էր, ռումբի պայթյունի ձայն»: «Ինձ թվաց, թե Թուրքերը տանկով մեր շենքին խփեցին, թվաց, թե Թուրքերն են ռմբակոծում»: «Երկրաշարժի ժամանակ մտածեցինք, թե Թուրքը հարձակվեց, ինչ-որ բան պայթեցրեց» և այլն):

1988թ. երկրաշարժի պատճառների վերաբերյալ աղետից անմիջապես հետո սկսեցին պտտվել ամենատարբեր լուրեր: Ըստ մեր հավաքած դաշտային ազդագրական նյութերի, երկրաշարժի պատճառների մասին կա երեք բացատրություն՝ 1. Երկրաշարժը բնական աղետ էր: 2. Երկրաշարժի առաջին ցնցումը եղել է բնական աղետի արդյունք, որի հետևանքով ստորգետնյա դինապահեստներում պայթյուն է առաջացել և առաջ է բերել երկրորդ՝ կործանիչ ցնցումը: 3. Երկրաշարժը արհեստական աղետ էր:

Երկրաշարժի բնական լինելը օբյեկտիվորեն բացատրվում է նրանով, որ Հայաստանը գիտակցվում է իբրև սեյսմոակտիվ տարածաշրջան, հետևաբար, մարդիկ իրական են համարում այստեղ կործանիչ երկրաշարժի հնարավորությունը, հիշում են նախկինում եղած կործանիչ երկրաշարժերը, իսկ հաջորդ օրերին տեղի ունեցող անընդհատ ցնցումները առաջ են բերում երկրաշարժի՝ բնական լինելու տպավորություն: Երկրաշարժի արհեստականությունը հերքողների փաստարկներից մեկն էլ այն է, որ երկրաշարժ նախապատրաստելու աշխատանքը հնարավոր չէր լինի այնքան հուսալի թաքցնել, որ դրա վերաբերյալ որևէ տեղեկություն չթափանցեր դուրս («Արդյո՞ք մենք ոչ մի ուղի չունեինք, հակահետախուզություն չունեինք, որ իմանայինք պատրաստվող երկրաշարժի մասին»: «Եթե գետնի տակից պայթյուն կազմակերպեին, մի՞թե ոչ մի հայ ոչինչ չէր նկատի»):

Երկրաշարժի բնականության փնտրտուքը շատերին տանում է դեպի 1988թ. աշնան՝ Հայաստանյան իրադարձությունները: Մարդկային կոլեկտիվ հուզականության աննախընթաց ալիքը, որ դրսևորվում էր թե առարկայորեն, թե զգայականորեն, ենթադրելի է դարձնում մթնոլորտում հույզերի այնպիսի խիտ կուտակում, որը կարող էր մթնոլորտային կենսադաշտի հետ սիներգիկ կապով խոշոր պայթյուն առաջ բերել (փոխվում է ստորգետնյա և վերգետնյա դաշտերի հարաբերական ներդաշնակությունը):

Երկրաշարժի օրերին այս բացատրությունը իշխող մտայնություն էր:

Այսպիսով, երկրաշարժի բնական լինելը բացատրվում է հետևյալ կերպ.

1. Հայաստանը գտնվում է սեյսմոակտիվ գոտում, այդ պատճառով էլ այստեղ հնարավոր են կործանիչ երկրաշարժեր:

2. Երկրաշարժը բնական է, որովհետև հնարավոր չէ ստորգետնյա հզոր պայթյուն առաջացնել:

3. Եթե երկրաշարժը լիներ կանխամտածված, նախօրոք պլանավորված պայթյունի հետևանք, ապա այդ մասին պետք է նախօրոք լուրեր տարածվեին բնակչության շրջանում: Նման լուրերի բացակայությունը խոսում է երկրաշարժի բնական լինելու օգտին:

4. Մարդկային հուզականության ակտիվացումը, բացասական էներգիայի կուտակումը հանգեցնում են տիեզերքի հակառակ ռեակցիային, մարդկային բացասական էներգիան հակադարձվում է, ընդհանրապես առաջ է բերում աղետներ:

Երկրաշարժը բնական է համարում, այնուամենայնիվ, հարցման մասնակիցների միայն մեկ երրորդը: Որքան էլ հստակ հնչեն երկրաշարժի՝ բնական աղետ լինելու վերաբերյալ տեսակետները, այդուհանդերձ, մինչև այսօր էլ գերակշռում է արհեստական լինելու մասին կարծիքը: Ինչո՞ւ են մարդիկ այս երկրաշարժը համարում արհեստական, ո՞վ կամ ովքե՞ր էին այն կազմակերպել, ինչպե՞ս է իրագործվել, և ո՞րն էր այդ արհեստական աղետի նպատակը: Հասարակ մարդկանց մեջ իշխում է այն մտայնությունը, որ ժամանակակից գիտությունը հասել է զարգացման այն աստիճանին, որ հնարավոր է կազմակերպել արհեստական աղետներ, որ գիտատեխնիկական նվաճում է «հատուկ երկրաբանական զենքը», որը ջրհեղեղներ, քամիներ, երկրաշարժեր է առաջացնում: Անգամ կոնկրետ նշվում է Սև ծովի ափին, Նովի Աֆոնի շրջանում հատուկ գաղտնի գիտահետազոտական ինստիտուտը, որը զբաղվել է երկրաբանական զենք ստեղծելով: Այս մտածողության համար հիմք են գրականությունը, ֆիլմերը, ասեկոսեները («Իմ կարծիքով, խորհրդային ղեկավարությունը երկրաբանական զենք է սարքել: Կարդացել եմ, որ այդպիսի զենք գոյություն ունի»: «Նովի Աֆոնի շրջանում գոյություն ունի մի գաղտնի ինստիտուտ, որը զբաղվել է երկրաբանական զենք ստեղծելով: Ուսումնասիրել էին, որ պայթյունի միջոցով կարելի է լիցքաթափել երկրի կեղևի տակ կուտակված էներգիան: Բայց նման պայթյունի համար մեծ միջուկային զենք է պետք»): Այսպիսով, մարդկանց մեջ խորը համոզմունք կա արհեստական երկրաշարժ առաջացնելու միջոցների գոյության վերաբերյալ: Երկրաշարժի արհեստականության համոզմունքը մարդիկ փաստարկում են հետևյալ կերպ.

1) Նախկինում ևս զգացել են երկրաշարժեր, երբեմն նույնիսկ ուժեղ երկրաշարժեր, որոնք իրենց բնույթով խիստ տարբերվում են այս երկրաշարժից, վերջինիս ցնցման ուղղահայաց ուղղվածությունն առաջ է բերում երկրաշարժի բնական լինելու վերաբերյալ կասկած [«Ես Տաշքենդում եմ ծառայել, բնական երկրաշարժ տեսել եմ (1980-ին), այդ պատճառով, երբ այս երկրաշարժը եղավ, չիմացա, որ սա բնական երկրաշարժ է»: «Դե, դպրոցում էլ եմ զգացել երկրաշարժեր, բայց սա երկրաշարժի նման չէր, երկրաշարժը նման ուժ չի կարող ունենալ, դա ուժեղ պայթյուն էր»: «Էլի եղել են ցնցումներ, բայց նման ալեկոծումներ, նման ձայն չկար, սա մարդու արած գործ էր, չ թե հորիզոնական, այլ ուղղահայաց տատանմամբ երկրաշարժ էր»]:

2) Մասնագետները կասկած են արտահայտել այս երկրաշարժի բնական լինելու վերաբերյալ՝ ենթադրելով, որ Հայաստանում 8 – 9 բալից ավել ուժգնություն ունեցող երկրաշարժ հնարավոր չէ, իսկ սրա ուժգնությունը տարածված պատկերացումներից շատ ավելին էր («Ռուսաստանից մասնագետներ էին եկել, պատմեցի նրանց, որ երկրաշարժի պահին գետինը

փոթորկված ծովի էր նման, ալեկոծվում էր, չհավատացին, ասացին, թե՝ նման երկրաշարժ հնարավոր չէ»: «Ճապոնացիներ էին եկել այստեղ, ասում էին, որ նման երկրաշարժ հնարավոր չէ»: «Սեյսմիկ կայաններից հաղորդված ելույթներից գիտեմ, որ Հայաստանում 8 – 9 բալից ավել երկրաշարժ չի լինի: Բայց այս երկրաշարժի ուժգնությունը երևի 13 բալ կլիներ»):

3) Երկրաշարժին նախորդած և հաջորդած մի շարք իրադարձություններ կասկած են առաջացրել երկրաշարժի բնական լինելու վերաբերյալ, մասնավորապես 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժի արհեստականության բացատրությունը հիմնավորվում է զինվորական շրջաններին վերաբերող լուրերով: Ընդ որում, այս լուրերը երկու տիպի են.

ա) Լուրեր մինչ երկրաշարժը տեղի ունեցած իրադարձությունների մասին, երբ ականատեսների վկայությամբ, Սպիտակի և Լենինականի շրջանի զորամասերի զինվորները և սպայական կազմի ընտանիքները տեղափոխվում էին այլ վայրեր:

բ) Լուրեր երկրաշարժից հետո տեղի ունեցած իրադարձությունների մասին, երբ ականատեսների վկայությամբ, հենց իրենք զինվորականներն են ակնարկներ արել երկրաշարժի արհեստական լինելու վերաբերյալ:

Մարդկանց մեջ համառորեն լուրեր էին պտտվում այն մասին, որ դեկտեմբերյան երկրաշարժից մի քանի օր առաջ Սպիտակի և Լենինականի մոտ տեղակայված կայազորների զինվորականներին և զինվորական հրամանատարության ընտանիքներին տեղափոխել են այլ շրջաններ՝ Երևան, Ռուսաստան: Այս լուրերի հավաստիությունը ապացուցելու համար վկայվում են հենց ականատեսների պատմածները («Մի հովիվ կար, երկրաշարժի օրը եկավ և ասաց, որ գետինը շարժվում է, մի բան պիտի լինի: Լենինականից զինվորներին անմիջապես լցրել էին ինքնաթիռները և տարել: Ինքը տեսել էր, թե ինչպես էին տանում»: «Սպիտակում ստորգետնյա հրթիռային բազայում երկրաշարժից առաջ պայթյունի ձայներ են լսել, հետո իմացանք, որ այդ բազայի ռուս սպաներն իրենց ընտանիքները նախօրոք ուղարկել էին Ռուսաստան»: «Երկրաշարժից երկու օր առաջ բոլոր զինվորականներին տեղափոխել էին Լենինականի զինմասերից»):

Երկրաշարժի արհեստականության շուրջ պտտվող լուրերի համաձայն, երկրաշարժից մի քանի օր առաջ ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ.Յազովը եկել է Սպիտակի ստորգետնյա գաղտնի ռազմական բազաներ: Դ.Յազովի այցելությունը, այնուհետև Սպիտակի և Լենինականի շրջանի կայազորների զինվորականների ընտանիքների տեղափոխումը այլ շրջաններ՝ երկրաշարժից անմիջապես հետո միայն կասկած են առաջացրել մարդկանց մեջ, որ զինվորականների տեղափոխումներն անհիմն չէին, նրանք տեղափոխվել էին, որպեսզի կայազորը նախապատրաստվող երկրաշարժի կամ պայթյունի ժամանակ կորուստներ չունենա («Ասում են, որ երկրաշարժից մի քանի օր առաջ Յազովն էր եկել Սպիտակ»: «Ասում էին, որ Սպիտակում ինչ-որ բազաներ կան, դրանք են պայթեցրել»):

4. Երկրաշարժի արհեստական լինելու կողմնակի վկայություն է ընկալվում լայնորեն տարածված այն կարծիքը, որ դեկտեմբերի յոթին երկրաշարժի պահին ՄԱԿ-ում ելույթ ունեցող ԽՍՀՄ ԿԿ քարտուղար Մ.Գորբաչովը կասկածելիորեն մի քանի անգամ նայել է իր ժամացույցին: Այդ ելույթը ցուցադրվել է հեռուստատեսությամբ: Ժամացույցին նայելու այս միջադեպի մասին տարածված խոսակցությունները ամենաակտիվներից են: Պատմում են նույնիսկ, որ երբ Գորբաչովին ԱՄՆ-ում հայտնել են

Հայաստանի կործանիչ երկրաշարժի մասին, իբր նա նայել է ժամացույցին և բացականչել. «Ինչպե՜ս, արդե՞ն»:

5. Երկրաշարժի արհեստական լինելու ենթադրությունը բացատրվում է նաև երկրաշարժից անմիջապես առաջ Սպիտակի շրջանում գտնվող ադրբեջանական Մարալ և Ղուրսալու գյուղերի արտագաղթով Ադրբեջան: Ադրբեջանական վերջին ընտանիքները հիշյալ գյուղերը թողել են 1988թ. դեկտեմբերի 5-ին («Մեր մոտի երկու գյուղերի թուրքերի գնալուց անմիջապես երկու օր հետո երկրաշարժ եղավ»: «Ինչո՞ւ հենց թուրքերի վերջին մարդը գնաց, երկրաշարժ եղավ, դե, թող մի օր շուտ լիներ»: «Երկրաշարժից անմիջապես առաջ թուրքերի փախեփախն էր: Երբ թուրքերը փախչում էին, ես մտածում էի, որ մի վատ բան կլինի»): Թուրքերի այս «փախեփախը», մարդկանց պատկերացումների համաձայն, վկայում է նախապատրաստվող աղետի մասին նրանց նախօրոք տեղյակ լինելը: Հետաքրքիր է, որ երկրաշարժի արհեստական լինելու ենթադրությունը «թուրքերի փախեփախի» հետ կապում են միայն սպիտակցիները:

6. Երկրաշարժին նախորդել են շրջակա միջավայրում դիտարկված մի շարք տարօրինակ երևույթներ: Սպիտակցի մի բանասաց նկարագրում էր երկրաշարժից շուրջ 20 րոպե առաջ Սպիտակ քաղաքի մոտ գտնվող սարերից մեկի կողմից արտասովոր լույսի հայտնվելը: Այդ լույսը «դեղնավուն և տարածվող» էր: Բանասացին տարօրինակ է թվացել հատկապես այն փաստը, որ այդ լույսը շարժվում է. «Սարերից իջավ դաշտի կողմը, 5 րոպեի չափ մնաց: Այն շենքերը, որոնք հատկապես տուժել էին երկրաշարժից, դրանց վրա որոշ ժամանակ այդ լույսը մնաց: Ընդ որում, «այդ լույսը» վերադառնում է իր ելման կետին և չքանում»:

Մեկ այլ տարօրինակ դեպք է դիտվել Ղալթախչի գյուղի Ծակ-քար կոչվող ուխտատեղի մոտ, ուր «երկրաշարժի օրը սնկի նման պայթյուն են տեսել, հեռուստացույցով ցույց տրվող պայթյունի պես սնկանման էր»:

Երկրաշարժը արհեստական համարողների կարծիքով որո՞նք են այս աղետի պատճառները. 1) 1998թ. դեկտեմբերյան երկրաշարժը պատահականության, սխալ հաշվարկի հետևանք էր, 2) 1998թ. դեկտեմբերյան երկրաշարժը նախօրոք ծրագրավորված, միտումնավոր հաշվարկված աղետ էր:

Նրանք, ովքեր երկրաշարժի պատճառ են համարում սխալ հաշվարկը, պատահականությունը, ենթադրում են՝

ա) Տեղի է ունեցել ապառազմականացում: Ինչպես արդեն վերը ասվել է, մարդիկ կոնկրետ նշում են այն վայրերը, ուր ռազմական բազաներ են եղել «Սպիտակի մոտ, սարի տակ» և «Լենինականի մոտ»: Ենթադրվում է, որ այս վայրերում գտնվող ռազմական բազաներում «ավելորդ» զենքի ոչնչացում է տեղի ունեցել («Միշտ մտածում էինք, թե ԱՄՆ-ի դեմ Խորհրդային Միության արտադրած զենքը պայթեցրել են, ասում են՝ Լենինականի մոտ, որտեղ զենք էին պահում»):

բ) Տեղի են ունեցել պայթուցիկ սարքերի փորձարկումներ, որի հետևանքով պատահաբար նման ուժգնության պայթյուն է առաջացել («Ասում էին, որ ռուսական զորամասերը պայթուցիկներ են բերել, զենքը գետնի տակ փորձարկել»: «Ասում էին, որ Սպիտակի մոտ, սարի տակ փորձարկումներ էին արել և պատահաբար պայթեցրել»: «Ասում էին, որ Սպիտակի ռազմական բազայում գետնի տակ «հրթիռներ են փախել» Սպիտակի կողմը»):

Հավաքված դաշտային ազգագրական նյութերում, սակայն, գերակշիռ

տեսակետն այն է, որ Սպիտակի երկրաշարժը դիտավորյալ կազմակերպված աղետ էր: Այս ենթադրությունից ածանցվում է երկու հարց. ո՞րն էր արհեստական երկրաշարժի նպատակը, և ովքե՞ր էին այն կազմակերպել: Արհեստական երկրաշարժ կազմակերպելու նպատակների մասին հնչում են հետևյալ տեսակետները. «Հայաստանում ծավալված ազգային-ազատագրական պայքարը թուլացնել», «Ղարաբաղյան շարժումից խելքի բերել», «Ղարաբաղի հարցից շեղել», «Հայերի ձայնը կտրել Ղարաբաղ ուզելու համար», «Հայերին վախեցնելու համար», «շարժումը խեղդելու, ժողովրդին խեղճացնելու համար», «խաղ խաղացին մեր գլխին» և այլն: Այսպիսով, մարդկանց պատկերացումներում Հայաստանը դիտվում է իբրև «Սովետի դեմ պայքարող», ազգային-ազատագրական գաղափարի կրող, առաջամարտիկ, որին «կենտրոնը» և «հակադիր ուժերը» հարվածեցին երկրաշարժով: Նախապես ծրագրված երկրաշարժը կազմակերպել և իրագործել են. ա) Գորբաչովը, բ) ռուսները, գ) թուրքերը:

Միջնադարյան պատմիչները, նկարագրելով Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժերը, դրանք ներկայացնում են իբրև Աստծո պատիժ՝ մարդկանց մեղքերի համար: Օրինակ՝ 499թ. Եղեսիայի երկրաշարժը բացատրվում է մարդկանց գործած մեղքերով. «Երկրի վրա սարսափելի երկրաշարժեր եղան, և պարզ է, որ դրանք տեղի ունեցան մարդկանց մեղքերի պատճառով, որոնց մեջ մխրճվել էին և (կատարվում էր) այն՝ արթնացնելու համար նրանց, որպեսզի նրանք (այլևս) սովով ու ժանտախտով չպատժվեն...»[5]: 893թ. Դվինի երկրաշարժի մասին Թովմա Արծրունին գրում է, որ «Դվին քաղաքը՝ մարդաշատ, պարսպավոր պատնեշներով, հղփացած ու հափրացած վաճառականությամբ, տեսակ-տեսակ պղծություններով, հիմքից տապալվեց, դժոխքի պես լայն բացեց իր բերանը, շատերին վիժեցրեց անդունդը... Դվինի քաղաքացիների քարեղեն սրտերի պատճառով չինայեց նրանց»[6]: 1667թ. Երզնկայի երկրաշարժի մասին գրիչ Եսային հաղորդում է. «Բազմաթիվ տներ ու ապարանքներ մեր ծովացյալ մեղքերի պատճառով հիմնահատակ կործանվեցին...»[7]: Բազմաթիվ նման այլ օրինակներ կարելի է բերել: Միջնադարյան աշխարհընկալմամբ, երկրաշարժը «աստվածային բարկություն է», «Աստծո պատիժ»՝ մարդկանց մեղքերի համար, «վերահաս վճիռ», իսկ օրեր, շաբաթներ, անգամ ամիսներ տևած անընդհատ ցնցումների դադարումը՝ «Աստծո ողորմածություն»: Այս մեկնաբանությունները մեզ հարկադրեցին 1988թ. երկրաշարժի բացատրություններում փնտրել «Աստծո մասնակցության» աստիճանը: Նույնիսկ ուղղակի տրված հարցին պատասխանները պարունակում են մերժողական բովանդակություն. մարդիկ այս աղետը հիմնականում չեն ընկալում որպես Աստծո պատիժ: Այս երևույթը բացատրում են հետևյալ կերպ.

1) Ինչպես արդեն վերը նշվել է, մարդկանց մեծ մասը այս երկրաշարժը համարում է ոչ թե բնական, այլ արհեստական միջոցներով և որոշակի պատճառներով առաջ բերված աղետ: Այստեղից էլ՝ այն միտքը, որ Սպիտակի երկրաշարժը Աստծո պատիժ լինել չէր կարող այն պարզ

---

[5] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 8, Ասորական աղբյուրներ, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ.Գ.Մանանդյանի, Ե., 1976, էջ 170:

[6] Թ.Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1978, էջ 238:

[7] Վ.Ստեփանյան, Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում և նրա մերձակայքում, Ե., 1964, էջ 78:

պատճառով, որ այն մարդիկ էին կազմակերպել («Սա Աստված չի արել, ինքը տեղյակ է եղել, բայց ինքը չի արել»: «Աստված էլ հո էն խուժան Գորբաչովը չէ՞, խաղ խաղացին մեր գլխին, Գորբաչովը խաղաց»: «Սա Աստծո պատիժ չէր, Աստված ինչ գիտեր, որ սա էսպես պիտի լիներ, սա մարդու գործ էր»: «Բանի որ արհեստական երկրաշարժ էր, Աստծո պատիժ լինել չէր կարող»):

2) Երկրաշարժը չէր կարող Աստծո պատիժ ընկալվել այն պատճառով, որ ողջ Հայության և մասնավորապես Հայաստանաբնակների համար 1988թ. խմբային և անհատական մաքրման շրջան էր: Հանդուրժողականությունը, բարյացակամությունը, զիջողամտությունը, սիրալիրությունը, ներողամտությունը վարքագծի գերակշռող չափանիշներ էին ինչպես առանձին մարդկանց, այնպես էլ Հայաստանի ողջ բնակչության, Հայաստանից դուրս՝ ողջ հայ ժողովրդի համար: Հայտնի է, որ այդ շրջանում նվազագույնի էին հասել քրեական հանցագործությունները, բռնությունները, առավելագույնի՝ մեծահոգությունը, առատաձեռնությունը... Հասարակության վարքագծի ուղղորդող ցուցանիշը ցայտուն արտահայտված բարությունն էր: Հիպերբոլային էին դարձել չարիքին բարությամբ պատասխանելու պատրաստակամությունը (օրինակ, ընդունված պահվածքը հետևյալն էր. չնայած սումգայիթյան եղեռնագործությանը՝ հայ ժողովուրդը մարդասպանության չպետք է դիմի, ոչ մի ադրբեջանցու կյանք չպետք է զոհաբերի և այլն), աշխարհին իր ազգային առաքինությունները ապացուցելու կամքը: Այս վերընթաց հոգեկան իրավիճակում մեղքի և պատժի հասկացությունները շատ կոնկրետ ընկալումներ ունեին, չէին վերացարկվում. փիլիսոփայական ընդհանրացման մակարդակով: Ի՞նչը պիտի պատժեր Աստված («Ի՞նչ ենք արել, որ մի հատ էլ պատժեր, մեր ժողովուրդը անմեղ է», «Իմ. կարծիքով, սա Աստծո պատիժ չէր, մեր գործը արդար էր, Աստված մեզ պատժելու առիթ չուներ», «Աստծո պատիժը ո՞րն է, մեր ժողովուրդն ի՞նչ է արել, որ Աստված պատժեր», «Աստծո պատիժ չէր, քանի որ անկախության ձգտող ժողովրդին Աստված չի պատժում, Աստված արդարի դեմը չի առնում»):

3) Երկրաշարժը չի համարվում. Աստծո պատիժ, որովհետև մարդկանց ընկալման մեջ Աստված հանդես է գալիս իբրև բարի սկիզբ, որը չէր դիմի նման ընդգծված բացասական չար քայլի: Առանձնացվում. է այն միտքը, որ Աստված չէր պատժի բոլոր մարդկանց միաժամանակ, քանի որ բոլորը չէ, որ արժանի էին պատժի («Աստծո պատիժ չէր, Աստված չէր պատժի ժողովրդին, Աստված սիրում է մարդկանց», «Անհնար է, որ Աստված բոլորին պատժեր, Աստված բոլորին սիրում. է», «Աստված ինչպե՞ս որոշեց, թե այս միլիոնավոր ժողովրդից որին պատժի, որին՝ ոչ: Չգիտեմ, Աստծո պատիժ չէր», «Այնքան անմեղ մարդիկ գնացին, մնացին «առնետները», գողերը, սա Աստծո պատիժ չէր», «Սա Աստծո պատիժ չէր. Աստված կուզե՞ր, որ այդքան անմեղ մարդիկ մահանային: Այնքան անմեղ երեխաներ գնացին»):

4) Որոշ մարդիկ կարծում. են, որ Սպիտակի երկրաշարժը Աստծո պատիժ չէր, բայց տեղի էր ունեցել Աստծո միջամտությամբ՝ մարդկանց սթափեցնելու համար, փորձություն էր՝ հավատացյալներին հիշեցնելու, որ կյանքը թանկ բան է, որ առաջնայինը նյութականը չէ: Այս դեպքում երկրաշարժը ուղղարկված էր իբրև զգուշացում. ոչ միայն հայ ժողովրդին, այլև հայ ժողովրդի միջոցով՝ ողջ աշխարհին:

5) Ոմանք երկրաշարժը դիտում. են ոչ թե իբրև Աստծո պատիժ, այլ չար ճակատագիր՝ կապված աղետի գոտում բնակություն հաստատած փախստականների մահվան անխուսափելիության հետ: Ադրբեջանից փախ-

չելով՝ նրանք հուսացել են, թե փրկվել են մահից, բայց չար ճակատագիրը, հետապնդելով նրանց, երկրաշարժ է ուղարկել նրանց ետևից Հայաստան: Հիշում է, որ թե Սպիտակում, թե Գյումրիում հիմնովին քանդվել են հատկապես այն շենքերը կամ թաղամասերը, ուր բնակություն էին հաստատել փախստականները [«Երկրաշարժից երկու-երեք օր առաջ Սարալ-Ղուրսալու գյուղերը հայ փախստականներ էին եկել, Ադրբեջանից փրկվել էին, բայց եկել էին ու այստեղ մահացել», «Մեր դպրոցի սպիտակցի ուսուցչուհին երկրաշարժից երկու ամիս առաջ պատմում էր, որ Սպիտակում մի նոր շենք էին շահագործման հանձնել, որը տվել էին սումգայիթցիներին, դարաբաղցիներին: Ասում էին, որ նրանք չեն փրկվել երկրաշարժից, որ երկրաշարժը նրանց ետևից եկավ Հայաստան: Ադրբեջանից գալիս էին շորհավորական հեռագրեր. հեռուստացույցով ասվեց այդ մասին»: «Ողջ Զերեմուշկեն (Սպիտակ քաղաքի թաղամասերից մեկը – Լ.Ս., Ս.Փ.) սումգայիթցիներ էին բնակություն հաստատել: Երկրաշարժից հետո մի քանի կանայք իրենց շենքերի փլատակների մոտ լաց էին լինում, ողբում էին, որ իրենց չար ճակատագիրն է հետապնդում»]:

Այնուամենայնիվ, երբեմն-երբեմն առկայծում է երկրաշարժի՝ Աստծո պատիժ լինելու ընկալումը: Սովորաբար այդ բացատրությունը տալիս են շեշտված հավատացյալները: Աստծո պատժի հնարավորությունը բացատրվում է.

1. Անհավատությամբ, մասնավորապես կոմունիստների աթեիստական քարոզով: Շատ է հիշատակվում Սպիտակում հիմնովին ավերված մի շենք, որը կառուցվել էր 1930-ական թթ. կոմունիստների կողմից քանդված եկեղեցու տեղում. հինգհարկանի շենքից կեսմետրանոց փլատակ էր մնացել: Այդ աստիճան ավերված ուրիշ ոչ մի շենք չկար: Սա դիտվում է իբրև Աստծո պատժի նշան:

2. Այս երկրաշարժը համարվում է Աստծո պատիժ, բայց ոչ թե հայ ժողովրդի, այլ ողջ մարդկության գործած մեղքերի համար: Հայ ժողովուրդը այս դեպքում դիտվում է իբրև «քավության նոխազ», որի միջոցով Աստված ցանկացել է ողջ մարդկությանը «դարձի բերել»: Հայ ժողովուրդը իր վրա վերցրեց պատիժը մարդկության գործած մեղքերի համար («Զայրույթ առաջ եկավ ինձ մոտ Աստծո նկատմամբ. հիմա Ադրբեջանը պիտի կարծի, թե հայերը պատժելի ազգ են: Երբ բարձրաձայն Աստծուն մեղադրեցի, մի ծեր կին ասաց, որ չի կարելի Աստծուն մեղադրել, Աստված գիտի, թե ինչ է անում: Սա համարում եմ Աստծո պատիժ ուրիշների կատարած մեղքերի համար: Մենք շատ ենք անմեղ, մենք քավության նոխազ ենք: Մեզ երկրաշարժ տվեց՝ ուրիշներին զգուշացնելու համար», «Ոչ մի բան այս աշխարհում հանկարծակի չի լինում: Եթե դա նույնիսկ մարդու կողմից սարքված էր, ապա նույնպես Աստծո կամքով էր: Գուցե այդ երկրաշարժով մարդկության մեղքերը մենք քավել ենք, որովհետև մենք դիմացկուն ազգ ենք»): Աստծո պատժի գաղափարը, սակայն, աղետի դոստուր բնակչության միայն յոթ-ութ տոկոսի մեջ է տարածված:

Աստծո պատժի մասին գաղափարից զատ, 1988թ. երկրաշարժի հետ կապված է մեկ այլ երևույթի մասին պատկերացումը: Դրա մասին խոսելիս բանասացները զգաստանում էին, երկրաշարժի վերաբերյալ իրենց զգացումները, զգացմունքները և հիշողությունները նկարագրելիս նրանց դեմքի հուզված արտահայտությունն ու ձայնը փոխվում էին, դառնում ավելի զուսպ, այդ մասին խոսում էին այնպես, կարծես ճակատագրական լուր էին

հայտնում կամ ողջ մարդկության ապագայի մասին հայտնություն անում: Դա աշխարհի վերջի ընկալումն է: Աշխարհի վերջի մասին պատկերացումը որոշակիորեն արտահայտվում է 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժի ընկալումներում: Դա կապված է ոչ այնքան երկրաշարժի կործանիչ ուժի զգացման հոգեբանական ազդեցության, այլև այն բանի հետ, որ մարդիկ, ինչպես նշում են բանասացները, սպասում էին աշխարհի վերջին, Հիսուսի գալստյանը:

Աշխարհի կործանման, աշխարհի վերջի զգացումը ցայտուն է արտահայտված հատկապես սպիտակցիների մեջ («Սպասում էինք, որ աշխարհը պիտի փուլ գա, որ Հիսուս պիտի հայտնվի: Մեզ թվաց, որ Հիսուսը քանդելով է գալիս, որ արդեն աշխարհի վերջն է, որ կյանքն ավարտվում է»: «Ողջ Սպիտակը դրսում էր. մտածեցինք, որ աշխարհը կկործանվի, մարդկությունը կկործանվի»: «Երկրաշարժից հետո նորից անընդհատ թափ էր տալիս, մարդիկ ասում էին, որ երկրին կործանում է սպասվում, նամանավանդ Հայաստանին: Մի կին լուրեր էր տարածել, որ շուտով նոր երկրաշարժ, ջրհեղեղ պիտի լինի, այսինքն՝ աշխարհի վերջն է գալիս»):

1988թ. երկրաշարժի հետ կապված ամենահետաքրքիր թեմաներից է, թերևս, երկրաշարժից առաջ եղած կանխագուշակումների, նախանշանների վերաբերյալ ժողովրդի մեջ տարածված թեման: Նպատակ չունենք պարզելու կամ ապացուցելու վերոհիշյալ երևույթների ճշմարտացիությունը, գուցե դրանցից շատերում կան չափազանցություններ (գուցե դրանց մի մասը հորինվել է երկրաշարժից հետո): Մեր նպատակն է վավերացնել 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժի վերաբերյալ ժողովրդական պատկերացումներում արտահայտված հիշյալ թեման: 1988թ. երկրաշարժից անմիջապես հետո մարդիկ սկսեցին խոսել աղետի վերաբերյալ արված կանխագուշակումների մասին: Ընդ որում, ինչպես բանասացներն են նշում, շատ դեպքերում այդ կանխագուշակումներն արվել են երկրաշարժից առաջ, որոնց մարդիկ խիստ թերահավատորեն են մոտեցել, չեն հավատացել և միայն աղետից հետո են սկսել խոսել այդ կանխագուշակումների մասին՝ իբրև «արդեն ապացուցված» իրողությունների: Նշենք նաև, որ հաճախ բանասացներն իրենք, ներկայացնելով այն, ինչ լսել են շրջապատում երկրաշարժի մասին արված կանխագուշակումների վերաբերյալ, խիստ թերահավատությամբ են մոտենում դրանց՝ դա բացատրելով հետևյալ կերպ. «Դա մեր հայ ժողովրդի սովորությունն է, անցածից հետո միշտ երազ կտեսնեն, բաժակ կնայեն»: Բայց ղե, եթե իրոք դա եղել է, թող հենց երկրաշարժից առաջ պատմեին: Ինչո՞ւ բոլորը երկրաշարժից հետո սկսեցին այդպիսի բաներ պատմել»:

Կանխագուշակումների վերաբերյալ դաշտային ազգագրական նյութը կարելի է բաժանել երկու պայմանական թեմաների. 1. կանխագուշակումներ ու նախանշաններ, 2. կանխատեսումներ:

Բանասացներից շատերը նշում են, որ իրենք երկրաշարժին նախորդած օրերին ինչ-որ վատ բանի կանխազգացում են ունեցել («Երկրաշարժից առաջ ծանր երազներ էի տեսնում: [Երկրաշարժի օրը – Լ.Ս., Ս.Փ.] մեր դպրոցի սպիտակցի ուսուցչուհին շատ անհանգիստ էր, ինչ-որ վատ բան էր կանխազգում, ուժեղ դխացավ ուներ: Գնացել էր բուժքրոջ կաբինետ, բայց ոչ մի միջոց չէր օգնել»: «Երեք օր անընդհատ ձախ աչքս խաղում էր, գիտեի, որ վատ բան է լինելու»: «Մեր սիրտը հեչ չէր ուրախանում, վատ բանի էինք սպասում. պատերազմ կամ վատ բան»): Հետաքրքիր է, որ այս բացասական իրադարձության կանխազգացումը արտահայտվում է ոչ միայն

երկրաշարժին նախորդած օրերի ընթացքում, այլև երկրաշարժից դեռ շատ առաջ՝ կապված այդ տարվա՝ չափից դուրս բերքառատության հետ («Այդ տարի շատ էփութափ էինք արել: Իմ նկուղում այնքան ուտելիք կար, որ մի հինգ ընտանիք կպահեի: Սկեսուրս ասում էր, որ սա գլխակեր տարի է, քանի որ շատ առատ տարի է»):

Աղետից հետո սկսեց խոսվել երկրաշարժի վերաբերյալ կանխագուշակումների մասին [«Ասում էին, թե մի կին գուշակել է, որ ինչ-որ երկրաշարժ պիտի լինի, մեր հայերին պիտի կործանի, ջրհեղեղ պիտի լինի: Երազ է տեսել, թե Սպիտակի տեղը օդանավակայան պիտի սարքեն: Այդ երկրաշարժից երկու օր առաջ է տեսել, պատմել, հետո երկրաշարժ եղավ»: «Գրքում էլ գրված էր՝ Բելոռուսիայում թե Ուկրաինայում մի ռուս կին գուշակել է, որ Հայաստանում երկրաշարժ պիտի լինի, և եղավ»: «Խոսակցություններ կային, թե մի ուկրաինացի կանխազգաց զանգել է Երևան, ասել, որ երկրաշարժ է լինելու Հայաստանում, ուժեղ երկրաշարժ է սպասվում, թող մի քանի օրով գործարանները փակեն: Կառավարությունն ասել է, թե Հայաստանի տնտեսությունը շատ կտուժի, եթե երկու օր էլ կանգնի, դրա համար էլ գործարանները չեն փակել»: «Երկրաշարժից մի երկու-երեք օր առաջ մի կին ասել է, որ երազում տեսել է, թե Լենինականը տակնուվրա կլինի: Բոլորը ծիծաղում էին վրան»: «Ասում էին՝ Լենինականում մի ուսանողուհի է եղել, որը երազում տեսել է, թե Լենինականը ծխի ու մրի մեջ է: Նրան ձեռք էին առնում ի՞նչ է հորինում: Բայց երբ երկրաշարժը եղավ, նրան հեռուստացույցով ցույց տվեցին, պատմեց իր երազը»: «Երկրաշարժից երեք օր առաջ տարօրինակ երազներ էի տեսնում: Առաջին օրը տեսա, որ ժողովուրդը լացով-կոծով սար է բարձրանում, երկրորդ օրը տեսա՝ ճանապարհները քանդվեցին, բլուրներ առաջացան, երրորդ օրը՝ դեկտեմբերի վեցի գիշերը, աշխատավայրիս կոլեկտիվը պարում էր: Ես չէի պարում: Դեկտեմբերի վեցին մենք պետք է գնայինք Թուրքերի երկու գյուղերը (Սարալ և Ղուրսալու)՝ անասուն փոխանակելու: Այդ երազից հետո վախենում էի, որ Թուրքերի հետ վեճ կարող է ծագել: Դրա համար զգուշացրեցի փոխանակման գնացողներին, որ զգոն լինեն: Բայց երազումս տեսած պարողները երկրաշարժի ժամանակ զոհվեցին»]:

Հետաքրքիրն այն է, որ երկրաշարժի կանխագուշակությունների մասին տարածված լուրերն իրենց արտացոլումն են գտել միայն Լենինականի, Սարատակ գյուղի և Սպիտակի բանասացների պատումներում: Երկրաշարժի կանխագուշակության վերաբերյալ հետաքրքիր տեղեկությունների ենք հանդիպում սպիտակցի բանասացներից գրառած նյութերում. «Մեր փողոցում խելապակաս երկու եղբայր կային: 1988թ. դեկտեմբերի վեցի գիշերը, երբ երկու ցնցումներ եղան, նրանք դուրս էին եկել և խոտերի վրա քնել. երկրաշարժի վախից տուն չէին մտնում: Բոլորը նրանց ծաղրում էին: Բայց հետո գլխներին տվեցին. բոլորը մահացան, միայն այդ երկու խելագարները մնացին կենդանի»: «Տղաս երկուսուկես տարեկան էր: Դեկտեմբերի յոթի օրը առավոտյան մանկապարտեզում նա զգացել է, թե իբր պատերը ցնցվում են, լաց է եղել, ցանկացել է դուրս գալ: Երբ տղաս դուրս է եկել, դաստիարակչուհին ամբողջ խմբին նրա հետ հանել է դուրս: Հետագայում դաստիարակչուհին պատմում էր, որ տղաս իբր տեսել է, թե ինչպես են մանկապարտեզի առջևի խաղահրապարակի խաղալիքները շարժվում: Այդ խումբը ոչ մի զոհ չի ունեցել երկրաշարժի ժամանակ: Երևի տղաս ճակատագիր էր»:

Երկրաշարժը կանխագուշակող-նախազգուշացնող մի տեսիլքի մասին է

պատմում. գյումրեցի բանասացներից մեկը, որը, սակայն, վերապահումով է մոտենում իր լսած պատմության իրական լինելուն՝ պատճառաբանելով, որ՝ «եթե իրոք դա եղել է, թող երկրաշարժից առաջ պատմեին»: Գյումրեցու պատմածը հետևյալն է. «Մեր ծանոթներից մեկը տաքսու վարորդ էր. պատմում էր, թե իբր երկրաշարժից մի հինգ օր առաջ Երևան գնալու ճանապարհին Լենինականի մերձակա գյուղերից մեկի մոտ դաշտից մի կիսամերկ կին է վազել դեպի մեքենան, կանգնեցրել և խնդրել իրեն տանել ինչ-որ մի գյուղ (Մարալիկի կողմերը): Վարորդը հանել է իր պիջակը, տվել նրան և տարել: Մի ինչ-որ գյուղի մոտ ճանապարհին այդ կինը խնդրել է կանգնեցնել մեքենան, ասել է, որ այդ գյուղում մի ծանոթի տուն պետք է մտնի և հագուստ վերցնի: Այդ տան շեմին, դեպի որը գնաց կինը, կանգնած էին երկու կին՝ ծեր և ջահել: Մերկ կինը նրանցից հագուստ է խնդրել, ծերը չի տվել, ջահելը տվել է: Նա վերցրել է հագուստը, նստել մեքենան և իբր ասել՝ ջահելները կորան: Փոքր անց, իբր, վարորդը շրջվել է և տեսել, որ մեքենայի մեջ նստած այդ կինը անհետացել է. տեսիլ է եղել: Հիմա էլ պատմում են, թե այդ մարդը երկրաշարժից հետո հոգեկան խանգարում է ստացել, քանի որ իրեն նախազգուշացում է հայտնվել երկրաշարժի մասին, իսկ ինքը չի հասկացել»: Ուշագրավ է, որ երկրաշարժի մասին բոլոր կանխագուշակողները կանայք են, կամ այս երևույթը կապված է կանանց հետ: Այս մասին պատմող բանասացների մեծագույն մասը նույնպես կանայք են:

Այսպիսով, 1988թ. հայաստանյան երկրաշարժի պատճառների ու հետևանքների անհատական և հասարակական ընկալումները մեծ մասամբ պայմանավորված են այդ ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական մթնոլորտով, Հայաստան-Ադրբեջան-Ռուսաստան հարաբերությունների հայաստանյան ընկալմամբ, պատմական անցյալի հիշողություններով (Թուրքիայի կողմից կազմակերպած հայերի ցեղասպանությունը) և հայ ժողովրդի՝ երկրաշարժի պահին ունեցած հոգեկան վերելքի և բարոյական մաքրության ինքնագգացողությամբ:

ПРИЧИННО-СЛЕДСТВЕННЫЙ РЕЗОНАНС СПИТАКСКОГО ЗЕМЛЕТРЯСЕНИЯ В АРМЕНИИ

Л.В.САФАРЯН, С.А.ПИРУЗЯН

Резюме

Спитакское землетрясение 1988г. произошло в самый активный период Карабахского движения. Его причины и последствия, получившие широкий общественный резонанс, в основном были обусловлены царившей в тот период в республике политической обстановкой. Оно рассматривалось в свете политических отношений между Арменией, Азербайджаном и Россией, имевших место в тот период исторического развития. Общественный резонанс, вызванный землетрясением, обусловливался также намечавшимися в тот период переменами в политической и социальной жизни республики.